ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N468Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

hոկտեմբերի 2020 թվականի N ---Ն
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N468Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 18-ի «Սպառողների էներգատեղակայանքներով էլեկտրական էներգիան ենթասպառողների կամ բաշխողի այլ ցանցերի սնման համար փոխանցելու կարգը հաստատելու մասին» N468Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածում (այսուհետ՝ Հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.
   1) Հավելվածի 15-րդ կետից հանել «(7 821 դրամ/ամիս՝ առանց ԱԱՀ-ի)», «(424 դրամ/ամիս՝ առանց ԱԱՀ-ի)», «(0,785 դրամ/կՎտժ՝ առանց ԱԱՀ-ի)», «(1,406 դրամ/կՎտժ՝ առանց ԱԱՀ-ի)», «(1,580 դրամ/կՎտժ՝ առանց ԱԱՀ-ի)», «(0,757 դրամ/կՎտժ՝ առանց ԱԱՀ-ի)» և «(1,344 դրամ/կՎտժ՝ առանց ԱԱՀ-ի)» բառերը:

   2) Հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 15.1 կետով.

«15.1. Սույն կարգի 15-րդ կետում նշված ծառայությունների վճարների a_1-a_7 մեծությունները ընդունվում են սույն կետի N1 աղյուսակում ամրագրված վճարներին հավասար.

Աղյուսակ N1

(առանց ավելացված արժեքի հարկի)

N	Մեծությունը	Վճարի չափը
1.	a_1	7 930 դրամ/ամիս
2.	a_2	430 դրամ/ամիս
3.	a_3	0,796 դրամ/կՎտժ
4.	a_4	1,426 դրամ/կՎտժ
5.	a_5	1,602 դրամ/կՎտժ
6.	a_6	0,768 դրամ/կՎտժ
7.	a_7	1,363 դրամ/կՎտժ

»:

- Հավելվածի 16-րդ կետում «հավասար» բառից հետո լրացնել «սույն կետի» բառերով, իսկ N1 աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Աղյուսակ N1

դրամ/ամիս (առանց ավելացված արժեքի հարկի)

N	Սպառողի սպառման համակարգի լարումը	Սպառողի ենթակայանի շահագործման փոխհատուցվող ծախսերի սահմանային մեծությունը	Սպառողի էլեկտրահաղորդման գծերի շահագործման փոխհատուցվող ծախսերի սահմանային մեծությունը
1.	6 (10) կՎ	89 217	16 522
2.	35 կՎ	356 867	28 087
3.	110 կՎ	713 734	29 739

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ